գամն է յիշուում։ — Նա լաւ գիտէ իւր դարու Հայերէնը և յայտնի դպրոցի մէջ լաւ կրթութիւն ստացած մէկն է. Ճառը գրել է Հաստատուն, յատուկ սովորած ծրագրով, նման այն Ճառերին, որ գրուել են ԺԱ. դարից սկսած և որոնց նմուշները հրատարակուած են «Սուփերքք Հայկականի» մէջ. Կարապետ եպիսկոպոսը վերնագրի մէջ կոչուում է «Սասնացի», մինչ էլ տրամադիր ենք Հ. Զարբանալեանի հետ «Սասունցի» համարել նրան, առաջի ձևը ժողովրդական ընդունելով։ Ճառը գրել է «ի խնդրոյ Հոմազնեա եղբաւր Ճգնաւորի», բայց թէ ով էր և որտեղացի էր այդ Ճգնաւորը, ոչինչ չգիտենք. միայն մի հանգամանք կարող էր յօգուտ վերևի բացատրութեան ծառայել. Կարապետը խօսելով Մեսրոպի հայրենիքի՝ Տարօնի մասին, այնպէս ճիշտ և ուղիղ կերպով է նկարագրում այդ նահանգի յատկութիւնները, որ երկրին անծանօթ մէկը չէր կարող իմանալ. մինչդեռ իբրև Սասունցի քանի քանի անգամ այցելած կը լինէր Մշոյ գեղեցիկ դաշտը և սքանչացած նրա պտղաբերութեամբ, օդի քաղցրութեամբ, երկրի գեղեցկութեամբ.

Կարապետի ներբողը չէ կարող մեզ համար պատմական աղբիւր ծառայել, նա նոր բան չէ յայտնում. զուտ պատմական մասը առել է ամենից շատ Մովսէս Խորենացուց, մասամբ Կորիւնից և ունի նմանութիւն Վարդան վարդապետի հետ. և մենք հրատարակելով՝ այդ ի նկատի չունէինք, այլ

ա. Զարբ. յ. ս. էջ 758. Հ. Զարբանալեանը առանց այլևայլուրեան «Սասնացի»ն դարձրել է «Սասունցի», գուցէ հիմնաւոր պատճառաւ, մեզ յայտնի չէ: